ԿՊԱՐԱՆԻՆ

ԱՐՁԱԳԱՆՔԸ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԹԱՓԱՆԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

14

ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՌՈՎՄ

ԵՍ ԵՄ ՃՇՄԱՐԻՏ ԵՒ ԵՍ ԵՄ ԿԵԱՆՔ

ԱՋԴ

1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վիճակեայի բաժանորդագինն է մէկ մէջ անգամ ևնոյնպէս հարկաւոր որ ի Կ. Պոլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարանները կամ Առաջնորդարանները մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դրկելու համար՝ Չորս (4) ֆրանկ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտոյ Կ. Պոլիս փոխադրուի, ծառայն ու ձերը, ինչպէս նաև բաժանորդագրութեան պարտական վերջնականապէս պիտի ճշդուին: — Մէկ թիւը՝ մէկ դանէկան է:

2. Արձագանգը կը հրատարակուի Շաբաթ օրերը:

3. Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակելու իրեն դրկուած ո՛ եւ է յօդուած:

4. Ստորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խմբագրութեան:

6. Ձեռագիրներ ետ չեն դարձուիր:

7. Ծանուցմանց համար մասնաւոր պարտականութիւն կը կատարուի:

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՋԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԹԱՓԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Առաջին Տարի | 23 Սեպտեմբեր 1911 | Թիւ 14.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՍԻՆՀՈԴՈՍ

Ի ՀՌՈՎՄ

Մեր վերջին թուոյն մէջ հրատարակեցինք Սրբազան Քահանայապետին Պիոսի Ժ. ի նամակն, յորում կը հրամայէր Ամենապ. Պօղոս Պետրոս ԺԳ. ի Թէրզեան՝ Կ. Պատրիարքի Կիլիկիոյ, Կաթողիկոսական Սինհոդոս գումարել ի Հռոմ։ Այս անգամ կը հրատարակենք գրաբար բնագիրն այն կոնդակին, զոր Ամենապ. Կաթողիկոսն՝ վերոյիշեալ Քահանայապետական նամակն ընդունելէ վերջը, ղրկեց Թեմական և Տիտղոսաւոր Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց Աթոռոյ, ինչպէս նաև երկու Մխիթարեան Միաբանութիւններուն Արհի. Աբրահայր Արքպ. ներուն և Լէմպէրկ քաղաքին հայածէս Կաթողիկէ Արքեպ. ին ի պաշտօնէ հրաւիրելով զամէնքն ի Սինհոդոս, ի Հռոմ։

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ԵՒ ՇՆՈՐՀԻՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ

ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Արհիեպատիր եւ Գերապայծառ Եղբարց մերոց

Արքեպիսկոպոսաց եւ Եպիսկոպոսաց Պատրիարքութեանս.

Ողջոյն ի Տէր, Պատուական Եղբարք.

Քաջ գիտէք ամենեքին, թէ որպիսի եւ քանի՛օր պէտք հարկի յաւելուստ ծանրանալն ի վերայ Եկեղեցւոյս մերոյ, այնու մանաւանդ զի պակասեն առ մեզ որոշ եւ կատարեալ սահմանք կանոնաց, որք օրինս կազմեսցեն եւ կանոն առնեղեալ՝ յաւելեալն գործս պաշտաւնեան եւ իրաւասութեան մերոյ: Ապա վասն այսր թերութեանս թուլացեալ անկեալ է բարեկարգութիւն առ մեզ, եւ ցանկալի եւեթ մնայ միաձեւութիւն յաւելեալին. իրաւունք եկեղեցական իշխանութեան բարձի թողի լինին, արժանաւորութիւն նորին յայսպանս նշաւակեալ կայ, նա զի յանդգնագոյն ժպրհութիւն աշխարհիկ արանց ընդդէմ Եկեղեցւոյ եւ պաշտօնէից նորին՝ աւեր իմն սպառնայ նմին իսկ նուիրապետական կարգի:

Առ 'ի զառաջս ունեցող զչարեացս եւ առ ի սիրպաւ եւ խեղճութեամբ հոգալոյ զապագայ բարօրութիւն Եկեղեցւոյս մերոյ, այն ինչ ամբարձեալ Մեր՝ թէպէտ առանց ինչ արժանաւորութեան անձինս՝ այդ կամօքն Աստուծոյ, ի պատիւ աստիճանի Պատրիարքութեան, ցանկանալով ցանկացեալ հաւ, Պատուական Եղբարք, կոչել զՁեզ զամենեսին ի ժողով Պատրիարքական, առ ի խորհուրդ 'ի մէջ առնուլ ընդ Ձեզ եւ զկարեւորսն սահմանել եւ հաստատել: Եկեալ Մեր այսր 'ի Հռոմիս ըզբաղմանս մեր եւ զպիտոյս առաջի եդեալ բազում աղերսիւք Սրբազան Հօրն մերում Պիոսի Ժ. Քահանայապետի, որ բազում հոգ խնամոց տածէ 'ի սրտի ի նորոգումն եկեղեցական կարգաց, իսկ նա ոչ միայն բարեացակամ յօ-

ժարութեամբ ընդ աղերսանս մեր հաւանիր, այլ եւ հայրական խնամածութեամբ հոգացեալ տնօրինեաց զամենայն զի կարող լինիցիմ զբաղձացեալն ժողով փութանակի գումարել: Մանաւանդ եւ զայս ինչ առանձինն իմն շնորհս քարութեան արար Մեզ, զի թոյլ ես կոչել զՁեզ ի ժողով այսր ի Հռոմ, մերձ առ շիրիմս Գլխաւոր Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, ընդ անմիջնորդական հովանեաւ նորին Առաքելական Ս. Աթոռոյն. որով հնար լիցի մեզ արագ արագ եւ անշուշտ յաջողութեամբ զգործն մեծ աւարտել:

Եւ արդ հասեալ զոլով ժամ ձեռն ի գործ արկանելոյ եւ զի սրտեռնութիւնք ժամանակաց ստիպեն զմեզ փութով շտապաւ յարդիւնս ածել զ'ի մէջ յեղյեղեալն խորհուրդ, յանուն Ամենասուրբ եւ միասնական սուրբ Երրորդութեան, 'ի փառս ամենակարողին Աստուծոյ, 'ի սրտիս երանելոյ Անարատ յղացելոյ Կուսին, սրբոց Առաքելոց Պետրոսի եւ Պաւղոսի, եւս եւ Սրբոյ Պաշտպանին մերոյ եւ Հօրն՝ Գրիգորի Լուսաւորչին, արտօնութեամբ որ տուեալ է Մեզ ի սրբոյ Գահին եւ Պատրիարքական իշխանութեամբս Մերով հրատարակեմք այսու թղթովս եւ ի գումարումն կոչեմք զՊատրիարքական ժողովն Հայոց Կաթողիկեայց յեկեղեցւոջ Ս. Նիկողայոսի Տոլենտինացւոյ 'ի Հռոմ, որոյ ունիմք սկիզբն առնել յայսմ ամի 1911, ի 15 աւուր ամսեան Հոկտեմբերի ըստ Ն. տ. յաւուր Կիրակէի: Վասն որոյ յորդորեմք 'ի Տէր եւ առ հարկի պատուէր տամք եւ հրամայեմք ամենայն Արքեպիսկոպոսաց եւ Եպիսկոպոսաց եթէ վիճակաւորք իցեն եւ եթէ տիզդոսաւորք, զի որոց անկ է յիրաւանց զալ ի ժողով, փութասցեն հասցեն ի դէպ ժամանակի եւ ի տեղին, որպէս ի վեր անդր ասեմանեցաք:

Եւ մի՛ ոք զանձն զերծ կացուցցէ ի պարտուց ասի զալոյ 'ի ժողովն՝ որով պարտականդեալն իսկ է, եւ եթէ արդար եւ ծանր պատճառք ինչ խափան իցեն զալստեան ոմանց, պարտին սոքա եթէ վիճակաւորք իցեն առաքել փոխանորդս տուեալ ի ձեռս նոցուն զվաւերական թուղթ փոխանորդութեան. ապայն Մեզ եւ Հարց ժողովոյն մնան իրաւունք դատաստանի զօրինաւորութենէ արգելիցն եւ զվաւերականութենէ փոխանորդութեան տուելոյ եւ զյարմարութենէ անձին իսկ փոխանորդի: Ունին իշխանութիւն բացակայ վիճակաւորն անուանելոյ զփոխանորդն եւ ի միջոյ եղբայրակից Եպիսկոպոսացն, որ զայցենն 'ի ժողով:

Տայցէ ամենակարողն Աստուած ըստ իւրում ողորմութեան եւ բարեխօսութեամբ երանելոյ Կուսին, եւ Սրբոց Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, եւս եւ ամենայն Պաշտպան սրբոց Հայաստանեայցս, զի որպէս յուսամք՝ ազդոյ լիցի ժողովս առ ի խլել արմատաբի եւ ամենեւիմբ իսկ 'ի բաց բառնալ զգեղծմունս, եթէ երբեք ապրդեալ իցեն առ մեզ, առ 'ի հատատել զեկեղեցական բարեկարգութիւն, առ 'ի կարգաւորել զհանգամանս վիճակաց այնպէս զի հանգոյն եւ

հանձայն ցիցի ամենայն ինչ իրաւանց եկեղեցւոյ, 'ի տարածանել եւս եւ 'ի զարգացուցանել բարգաւաճել զկաթողիկի կրօնս, եւ Մեք, Պատուական Եղբարք, ի Սուրբ Միաբանութենէ ուխտիս այսորիկ ընկալցուք զդոյս եւ զեռանդն առ ի փառել զպաշտօնս մեր ըստ հանդիսական կանացն Աստուծոյ:

Եւ զի յաջողեսցի մեզ այս ամենայն աղաչեմք զամենեսին միաբան յարաժամ աղօթս առնել առ Աստուած, յորմէ են իղձք բարիք, եւ արդար խորհուրդք եւ պարգեւք կատարեալք զի շնորհեսցէ ածել ի կատար զսկսեալն զգործ յանուն Նորա:

Տուեալ ի Հռոմի արտաքոյ դրան Սրբոյն Պողոսի, յ 31 աւուր ամսեանն Օգոստոսի և. տ. յամին 1911, եւ Պատրիարքութեանս Մերոյ յերկրորդում ամի:

Աղօթարար

✠ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԷՐՁԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ԴԻՏՈՂ

Զ. Խծբծել կ'ուզուի նաև Կ. Պատրիարքին այն խօսքը թէ Սինոդի հետ Հասարակութեանս Կանոնագիր մը պիտի պատրաստէ. զոր կը խոստանայ ընել « Կաթողիկէ Եկեղեցւոյ և Կրօնքին ջերմապէս փարած ժողովրդեան հաճելի կերպով »: Ինչո՞ւ այս իրաւունքը պիտի չկարենայ ունենալ Կ. Պատրիարք մը՝ քանի որ ինքն է Պետ և պատասխանատու, և խառն խնդրոց մէջ ալ ամենէն ճեռնհասն են ինքն և իր Սինոդոսը. մանաւանդ որ մտադրած է նա այսպիսի Կանոնագիրը ժողովրդեան հաճելի կերպով յօրինել, բայց – ընդհանրապէս – ճշմարտապէս Կաթողիկէ ժողովրդեան մը: Քանի մը աշխարհականաց մենաշնորհն է ծրագիր յօրինել, և զայն անպատճառ ընդունել տալ, և առ այս ստիպել նաև զՍինոդոս: Ո՛ր-պիսի պայմաններու մէջ յօրինուած է այն իրենց ծրագիրը. քանի որ անճեռնհասներ ո՛չ գիտէին, ո՛չ տրամադիր էին գիտնալու եկեղեցական կանոնները. շատերը միշտ բացակայ. մնացող քանի մը հոգիք միշտ անհամաձայն. պարագլուխը միշտ իր խորհելակերպը քալեցնելու զբաղած, և ստէպ որոշուած յօդուածները տուն տանելով՝ գիշերը ըստ իւր քմաց կը փոխեր.

երկու քահանայք գրեթէ միշտ դիմագրող էին. և ապա վերջապէս մէջ տեղ ելաւ գլխէ գլուխ մոլորութիւններով լի ծրագիր մը, որուն ձեռագիր բնագիրն իսկ անհետացած է։ Ինչպէս ուրեմն անպայման հեղինակութիւն մը պիտի ունենայ այս տեսակի մի ծնունդ։ Եւ ինչպէ՞ս պիտի ժխտուի Կ. Պարքի և իւր Սինոդին առաւելագոյն հեղինակութեամբ պատրաստել կանոնագրի ծրագիր մը, իրաւասօրէն զատելով կրօնականն և անձեռնմխելին, և իր հեղինակութեամբ տալով անոր կարևոր հաստատութիւնը։ Չայս կրնան մերժել միայն անոնք որ Կաթողիկէ Հասարակութեանս մէջ Եկեղեցական Իշխանութիւնը ոչնչացնել և յինքեանս կրկնել մտադրեցին։ Ս. Եկեղեցին ալ կը մերժէ այսպիսի ոտնձգութիւններ, այսպիսի ինքնամատոյց օրէնսդիրներ, — ամէն գնով։ — Մեր ըսածին չկրնար հակառակել Դիտողը, քանի որ կը յայտարարէ թէ « ծրագիրը վերջնական չէ, այլ ենթարկեալ է Սինոդոսի ՈՐՈՇՄԱՆ »։ Ուրեմն երբ Պատրիարքը իր Սինոդոսին հետ կանոնագիր մը յօրինէ, նոյնպէս ոչ ոք տագնապիլու կամ զայրակղելու իրաւունք ունի։

Է. Շատ զարմանալի հակասութեան մէջ կ'իյնայ սակայն Դիտողը, երբ խօսքը կը դարձնէ ժողովոյ մասին։ Ա. Երեսփոխանական ըսուած ժողովը կը շփոթէ Միւրեպհարան մեհենիի ըսուածին հետ. և ցոյց տալ կ'ուզէ որ երկուքը համազօր ըլլան։ Արդ սուիկայ էական սխալ մըն է. կառավարութիւնը երբեք իրեն պէս իմացած չէ և չիմանար։ Հայ Էջմ. Պատրիարքարանին տուած է Սահմանադրութիւն մը և Երեսփ. ժողով. և Տիւսթուրին մէջ անցուցած է զայն. բայց մեզ՝ ոչ՝ երբեք. այլ միայն Միւրեպհարան մեհենիի մը, կազմուած Հասարակութեան առաջնորդներէն, որոյ ընտրութեան եղանակը բնաւ նոյն չէ Երեսփոխանականի մը ընտրութեան հետ. որ բնաւ չէ ունեցած ինքնին օրէնսդիր մարմին մ'ըլլալու յաւակնութիւնը, որ բնաւ զինքը Սինոդոսի հաւասար և Պատրիարքին գերադաս չէ կարծած. որ չէր կրնար տեղին ապօրինութիւններ գործել՝ առանց Պատրիարքի և ընդհան Պատրիարքի գումարումներ ունենալով, ոտնակոխելով անոր իշխանութիւնը. որ կանոնագրի մը վերջնական հաստատութիւնը երբեք իրեն չէ վերապահած։

Ը. Դարձեալ շատ սխալ սկզբունք մը կը քարոզէ Դիտողը երբ կ'ըսէ թէ Ս. Գահը բարեկարգական խնդրոց նկատմամբ պէտք է համաձայնի Օսմ. Տէրութեան հետ։ Եթէ այդ խնդիրները կը հային Օսմ. Տէրութեան ներքին կանոնաց, Ս. Գահը ապնոց երբեք չխառնուիր, և կաթողիկէ Հասարակութիւնը անոնց միշտ յարգագիր եղած է և պիտի ըլլայ ո՛չ Ս.

Գահը և ո՛չ կաթողիկէ Հասարակութիւնը երբէք չի մերժած անոր օրէնքները. զրպարտութիւն է զայս ըսելը։ Իսկ եթէ եկեղեցական-բարեկարգական խնդիրներ են, արդէն Կառավարութիւնը ասանց չխառնուիր, քանի որ կրօնքի կը վերաբերին։ Իսկ Մօնս. Ֆրանքիի պատուիրակութիւնը բացառիկ պարագայից մէջ եղած է. այսու հանդերձ այն առթիւ ալ Տէրութիւնը հաստատեց միանգամ ալ որ չուզեր այս խնդիրներու մէջ մտնել։

Թ. Ա՛ս տրամադրութեամբ է որ Դիտողը շատ աւելի մեծ սխալ մը կը գործէ, որ տգիտութեամբ կամ անմտադրութեամբ միայն կրնայ արդարանալ։ Կը հրաւիրէ Ս. Գահը ուղղակի բանակցութեան մտնելու ազգին հետ։ Մարդ կը զարմանայ և կ'ապշի։ Ո՞վ է ազգը. կարելի՞ է ցուցնել զայն։ Ո՞վ է Ս. Գահը... ըսէ՞ կ'ուզէք որ երկու հաւասարներ պիտի բանակցին։ Դեռ այդ յաւակնոտութիւնը առաջին անգամ կը լսենք։ Ս. Գահը Գերագոյն Ատեանն է. Եկեղեցւոյ Գլուխ և անսխալ Վարդապետ, աւանդապահ և ուսուցիչ հաւատոյ և բարեկարգական Կանոնաց և բարոյից, որոնք բնաւ չեն կրնար բանակցութեան նիւթ ըլլալ, այլ ամէն ժողովուրդներ, հզօր պետութիւններ իսկ հլու հնազանդութեամբ կ'ընդունին զանոնք։ Եթէ Ս. Գահը երբեմն բանակցած է Տէրութեանց հետ, ասոր համար բնաւ զսպած չէ իր բարեկարգական սկզբունքները. բնաւ երբեք թոյլ տուած չէ անոնց օրէնսդիր ըլլալ եկեղեցական խնդիրներու վրայ, կամ արհամարհել կարգաւոր եկեղեցական իշխանութիւնը, կամ արգելուլ զայն եկեղեցիներու մէջ կամ անոր հրամանագիրները պատռել։ այլ բանակցած է միայն կրօնքի գործադրութիւնը կանոնաւորելու և դիւրացնելու համար։ Իսկ Դիտողը կ'ուզէ որ Ս. Գահը բանակցի ինքնասաց ժողովներու հետ որոնք կ'արհամարհեն Եկեղեցւոյ բարձրագոյն Իշխանութիւնը։ Եւ օրինակ կը բերուի Քրիստոսէն որ « ուզից անձամբ երթալ և հարիւրապետին ծառան բժշկել ». ուրեմն հարիւրապետը կամ իր ծառան Քրիստոսի Տեառն մերոյ հետ բանակցեցա՞ն բժշկութեան կերպին կամ պայմանների վրայ։... Մարդուն սիրտը կը կծկի նոյն իսկ խօսելու սոյնօրինակ անտրամաբանութեանց և սրբապղծութեանց վրայ։

Ժ. Բայց ստիպուած ենք դեռ ուրիշ մեծամեծ սխալներ մատնանշելու, որպէս զի գոնէ պարզամիտներ և անկեղծներ չխաբուին և հոսանքէն չտարուին։ Կ'ըսէ թէ ազգը միշտ յարգած է Ս. Գահին բարեկարգական հրահանգները, բաւական է որ հակառակ չըլլան Օսմ. Կառավարութեան օրինաց-և ազգին կենսական սովորութեանց, ծիսից և արարողութեանց »։ Պարբերութիւն մը՝ լի մոլորութիւններով։ Ա. Ո՞ւր երբեք կրնայ նոյն իսկ

ենթադրել որ Ս. Գահին ԲԱՐԵԿԱՐԳԱԿԱՆ հրահանգները կրնան հակառակ ըլլալ Օսմ. Կառավարութեան օրինաց, դիտաւմնաւոր զրպարտակեն ենթադրութիւն մ'է այդ։ 2. Այս ընդհանուր դրութիւնը ողբալի հետևանքներու դուռ կը բանայ. ըսել է հիմա օ. հ. Բորթուգալի սմպարիչա նոր օրէնքը Քահանայապետական հրամանաց և հրահանգաց չափը պիտի ըլլայ։ 3. Նոյնպէս հնարաւոր է ենթադրել թէ Ս. Գահը կ'ուզէ ծիսից, արարողութեանց հակառակիլ, այն՝ որ դարերու շրջանին մէջ ո՛չ միայն հրամայած է զանոնք անաղարտ պահպանել, այլ նաև զանոնք փոքրու խակ փոխել յանդգնողներուն սպառնացած և սահմանած է պատիժներ։ 4. Իսկ ապագին կենսական սովորութիւնի ինչ են արդեօք, ո՞վ պիտի սահմանէ զանոնք. բարի՞ են թէ չար, ուսկից՞ ծագումն առած են անոնք Հայ – Կաթողիկէ Եկեղեցւոյն մէջ։ Ի՞նչպէս անձեռնմխելի կ'ըլլան սովորութիւնք, նոյն խակ Քրիստոսի Փոխանորդին համար, Եկեղեցւոյ ընդհանուր և անսխալ Գլխոյն համար, այնպիսի ճշմարիտ և անկեղծ Կաթողիկէից համար ինչպէս կ'ուզէ հաւատացնել Դիտողը, որոնք միշտ կը յարգեն Ս. Գահը. արդեօք այս յարգութիւնը այն կատարեալ հնազանդութիւնը չրսվանդակե՞ր, ինչպէս պէտք է լմննան և կ'լմննան ճշմարիտ Կաթողիկեայք ամէն տեղ և ամէն ատեն. կամ թէ միայն հերձուածող Եկեղեցեաց պէս զՔահանայապետը կը ճանչնան իբրև Առաջինը հաւասարաց մէջ։ 5. Անպատճառ այնպէս կ'լմննայ Դիտողը, քանի որ՝ հակառակ Տիեզերական ժողովոց վճիռներուն և անաթեմաներուն, կ'ուզէ որ Ս. Գահը իշխանութիւն չունենայ մեր մէջ Սովորութեանց անգամ դպչելու, մինչդեռ նա անմիջնորդական իրաւասութիւն ունի՝ լրութեամբ և կարգաւոր, ամէն ու իւրաքանչիւր եկեղեցեաց վրայ ի–հաւատոյս, ի բարեկարգականս և ի բարոյս։ Այսպէս կ'լմննայ Դիտողը, քանի որ Քահանայապետական հրամանաց և հրահանգաց վրայ ազգը կը կարդէ դատաւոր. «Բաւական է որ հակառակ չըլլան» . . . ազատամտութիւն՝ մերձաւոր բաղաքականութեան, և զինքը կաթողիկէ անուանելով՝ սրտաբորբոք մոլորութիւն։ Համեմատութեան երկու եղր, երկուքն նժար՝ Քահանայապետութեան Գերիշխանութեան. մին՝ պետական օրէնք. միւսը՝ ազգը։ Դժբախտ Կաթողիկէութիւն։ Ինչո՞ւ ուրեմն ի սկզբան անդ յանխորհուրդս կը դարձուէր Կաթողիկոսական Կանդակը՝ անոր համար որ սա կ'ըսէր թէ « ոմանք կ'ուզեն ինքնուրոյն և ազատ եկեղեցի հաստատել » և կը գոչէր դառնացեալ սրտիւ. « Ամո՛թ այսպիսի յանդուգն դատողութեան »։ Հիմա ինքն իսկ իր Դրութեամբ բացայայտ կ'իյնայ այս մոլորութեան մէջ։ Մարդ պէտք չէ յաղթահարի կիրքէն, և չգիտցածը պէտք չէ դատէ։

ԺԱ. Իսկ ընտրութեանց մասին կ'ըսենք որ ժողովրդականը միայն բարի վկայութիւն է. որ եթէ յիրաւի բարի չըլլայ, զեկեղեցին երբեք չպարտաւանդեր։ Եւ ինչ որ Ս. Գահը թոյլ տուած է, պարզապէս շնորհ մըն է և ոչ իրաւունք, և չէր կրնար տալ զայս իրը իրաւունք, զի հակառակ գործած կ'ըլլար Եկեղեցւոյ ընդհանուր Կանոնաց։ Մինչդեռ ոմանք կը կարծեն թէ իրենց իրաւունքն է ընտրել. այնչափ որ կը կարծեն թէ երբ իրենց ընտրեալը իրենց քմահաճոյքը չկատարէ, ըլլայ այն նոյն իսկ հակառակ Եկեղեցւոյ Կանոնաց, իրենք իրաւունք ունին զինքն պաշտօնանկ ընելու. և ահա այս սկզբունքով շարժեցան, բողոքներով, մերժումներով, պաշտօնանկութեան առաջարկներով։ Եւ ով որ այսպէս կը գործէ, չի կաթողիկեայ։ «Դուք ինչո՞ւ Աստուծոյ պատուիրանները ոտնակոխ կ'ընէք ձեր աւանդութեան համար» (Մատթ. ԺԵ. 3.)։ «Եւ թողուցիք օրինաց ամենածանր մասերը, և հաւատքը. որ մժղուկները կը քամէք և ուղտերը կը կլլէք» (Իգ. 23-4)։

(Շարունակելի) Կաթողիկէ

Հին Կաթողիկէի մը Դարձը

Երբ 1870 ին Վատիկանու տիեզերական Ս. ժողովոյն մէջ Քահանայապետական անսխալութեան հրամանակարգ վարդապետութիւնը կը սահմանուէր իրը ճշմարտութիւն հաւատոյ, և Գեր. Տիւբանլու ամենայն խոնարհութեամբ կը հնազանդէր իւր ընկերակից Եպիսկոպոսաց հետ և կը դաւանէր յայտնեալ ճշմարտութիւնը, անդին ի Գերմանիա մի քանի յամառ քահանայք շարունակեցին ժխտել և ուրանալ և կերպապէս հերետիկոս հրատարակուեցաւ, և իրենք զիրենք անուանեցին «Հին-Կաթողիկեայ»։ Ասոնց պարագլուխը կ'անուանուէր Տէօլլինկէր. և կաթողիկէ Եկեղեցւոյն հալածիչ և Մայիսի ամպարիշտ օրէնքներուն հեղինակ երկաթեայ նախարար Պիզմարքէն պաշտպանութիւն գտնելով՝ ինչպէս նաև յարևելս մեր նոր - հերձուածողք, մի քանի տարի շարունակեցին իրենց անկարգ ապստամբութեան մէջ. ապա երբ Պիզմարքի յամառութիւնը կաթողիկեայ կենդրոնին և անոր գլուխ փոքրահասակ բայց մեծոգի և վեհասիրտ Վինտհօրսթի պղնձի կամքին բաղխելով փշրեցաւ, քայքայեցան նաև Հին-Կաթողիկեայք և վայրավատին թափառական կամ կորսուեցան անհատաբար կամ վերադարձան ի փարախն Ս. Պետրոսի։

Մնացած էր սակայն ալևոր մը սանցմէ, ի Պէրն (Զուիցերիոյ), 87 տարեկան, Տէր Կոֆֆինալ։ Անխաղութեան և Հաւմէականութեան սխեռիմ թշնամի մըն էր։ Լրագրութեամբ, բեմի վրայ, պատգամաւորութեան մէջ անխնայ կը մաքառէր անդրալեռնականութեան դէմ։ Ինքն է որ մղեց Ժընէվի կառավարութիւնը հալածելու և վտարանդի աքսորելու զգերահրուչակն Կարդ. Մէրմիյյօ։ Իր անզուսպ հեղեղանման ճարտարապանութիւնը հաղարաւորներ կը գրգռէր Եկեղեցւոյն թիկնագարձ հակառակութեան։ Ցաջորդեցին սակայն տարիներ հանդարտութեան, խորհրդածութեան ներքին պայքարի. և եկաւ հուսկ ապա նաև շնորհաց վայրկեանը։

Այս տարուան Զատկազարդին օրը, Տ. Կոֆֆինալ, զգալով որ քիչ օրեր մնացեր էին իրեն այս աշխարհիս վրայ, Պէրնի կաթողիկէ ժողովրդապետը կոչեց։ Սա ապշահար մնաց երբ Տ. Կոֆֆինալ իրեն ազաչեց, որ՝ յանուն Անոր որ իր արիւնը թափեց մեր ամենուն համար, իր անձին՝ որ ցայնվայր թշնամի եղած էր Նորա Եկեղեցւոյն, սիրոյ գործ մը կատարէր, այս ինքն լուր տար Սրհի. Եպիսկոպոսին որ ինքն հաստատ որոշած էր դառնալ ի ծոց Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ, խաղաղութիւն տալու համար իւր խռովեալ հոգւոյն՝ քառասուն տարուան մը մաքառումէն։ Ի սկզբան անդ, Կ'ըսէր, համոզուած անհաշտ թշնամի եղած էր վարդապետութեան. բայց խնդրոյն ուսումնասիրութիւնը խախտած քայքայած էր իր այս համոզումը։ Ան ատեն աշխատած էր տարակոյսները և խղճի խոյթերը խեղդելու ազմկալի գործունէութեան և սխակալ վրիժառու պուշտպանողականի մը մէջ։ Սակայն ձայնն որ զինք փարախը կը կոչէր՝ չէր լռեր բնաւ, մանաւանդ ի շնորհս ազօթքներուն իւր մօրը՝ խեղճ արդկչուհի, որոյ զոհողութիւններն թոյլ տուած էին իրեն քահանայութեան պատրաստուելու; և որ՝ իր հոգևարքին ժամանակ երդուընցուցած էր իր զաւակն բնաւ ուրացութեան մէջ չիյնալու։ Դարձի և ապաշաւի եկած քահանայն այս ժամուս կ'ողբար իր անցեալը և կը խնդրէր որ իր դարձը ծանուցանեն իր Եպիսկոպոսին և թէ կը փափաքէր ընդունուիլ ի ծոց Կաթողիկէ Եկեղեցւոյ։

Եպիսկոպոսը ապաշխարող ուրացողին մնարին քով զրկեց իւր փոխանորդն որ խոստովանցուց զինքը, դատակնիքներէն արձակեց և Ս. Հաղորդութիւն տուաւ։ Քիչ վերջը հիւանդն հոգին աւանդեց։

Իր վերջին խօսքերն սոնք եղան. «Մարդ կրնայ սխալիլ. բայց բնաւ մոռնալու չէ խնդրել՝ իր մոլորութիւնը ճանչնալու և շտկելու շնորհքը»։

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

Պավիէրայի Թագաւորութեան խնամակալ Լուիթբոլտ իշխանն այս տարի իւր ինոնեերորդ տարիքը լմնցնելուն առթիւ Սրբազան Քահանայապետ Պիոս Ժ. գեղեցիկ նամակ մը գրած է, զոր թարգմանաբար ուզեցինք դնել հոս, ի շինութիւն ընթերցողաց.

Ամենասիրելի Որդի մեր 'ի Քրիստոս, ողջոյն և առաքելական Օրհնութիւն.

Հասակիդ ինոնեերորդ տարին որ ի մերձուստ կը լրանայ, յօժարակամ փափագանօք կը մնացնէ և զՄեզ Պավիէրայի քաղաքացւոց՝ որոնք միասիրտ և միահոգի և խնդութեան բազմատեսակ ցոյցերով այն ցանկալի օրը կը տօնախմբեն. և Քեզ՝ զոր ջանքերու ու ծառայութեանց վեղեցկազոյն սովորոյթն Մեզ ամենասիրելի ըրաւ, սրտագինս կը շնորհաւորեմք, արդարև ո՛չ միայն յայն սակս որ այնքան բեզմնաւոր կեանքի մը ձիրքը Աստուծոյ շնորհօքն ու բարութեամբը դէպ եղաւ Քեզ վայելել, այլ գլխաւորաբար անոր համար որ տարիներու թիւը բարի գործերուդ բազմապատկութեամբը գերազանցեցիր։ Եւ իրաւամբ կը շնորհաւորեմք. երբ «Պակ պարծանաց ծերութիւն, և ի ճանապարհս արդարութեան գտանի» (Առ. ԺԶ. 31)։ Օր քան զօր առատագոյն հասնի Քեզ Աստուածային շնորհաց օգնականութիւն, որով ամենալաւ իշխանիդ կեանքը ոչ տարիքի անջրպետով աւարտի, այլ այն գովութեամբ զոր կը ստանայ առաքինութիւնը, զոր պիտի դրուատէ ներկայ ժամանակը, ընդ որ ապագայն պիտի սքանչնայ ու պիտի գուրգուրայ և զոր վերջապէս արդարն Դատաւոր պիտի զարդարէ այնպիսի փառօք՝ որ ժամանակի ո՛և է երկայնութեամբ պիտի չկարենայ կորսուիլ։

Ահա, Սիրեցեալ Որդեակ, Քու սրդիական առ Մեզ տածած սիրոյդ փոխարէն՝ մեր հայրական խանդաղատանաց մաղթական իղձերն. զանոնք լիացնէ ու կրկնապատկէ առաքելական Օրհնութիւնն, զոր՝ իրը առհաւատչեայ գրաւական երկնաւորն բարեաց Քեզ և բովանդակ գերդաստանիդ սիրողաբար կը շնորհեմք։

Տուեալ ի Հռովմ՝ առ Ս. Պետրոսի, յաւուր 7 Մարտի ամսոյ 1911, Քահանայապետութեան մերոյ յամին ութերորդի։

ԹԵՄԵՐՈՒ ՀԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆՑ

Ճշմարիտ Հայն

Հայ - Կաթողիկէ Ժողովրդեան Եւդոկիոյ

Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեան Կաթողիկոս - Պատրիարք Իբրև Հայ-բապետ Հայ - Կաթողիկէ Նուիրապետութեան, ըստ բացորոշ հրամանի Գերագոյն Գլխոյ Եկեղեցւոյ Պիոս Ժ. Սրբազան Քահանայապետի, իւր աքանչելի կոնդակաւն, ուղղեալ առ ամենայն Հայ-Կաթողիկեայս, որուն մէջ գլխաւոր կէտերը բացատրելէն և վարդապետելէն յետոյ, լուծեց երեսփոխանաց ժողովը և դատապարտեց անոր կանոնագիր ծրագիրը, և պատուիրեց չմատնակցիլ այդպիսիներուն, այլ հլու հպատակ մնալ Սուրբ Կաթողիկէ Եկեղեցւոյ։

Արդ մենք ստորագրեալքս և համախոհք մեր ամենեքին բարձրաձայն կը յայտարարենք թէ Գերերջանիկ Թէրզեան Կաթողիկոսին յիշեալ հովուական կոնդակը իւր ամբողջ վարդապետութեամբ ընդունել, յարգել և պաշտպանել մեր նուիրական պարտքն է և անոր հետ 'ի միասին և անոր հոգւով մնալ հաստատ 'ի ծոց Կաթողիկէ Եկեղեցւոյ մեր քրիստոնէական խրոճին պատիւն ու պարծանքն է։

Դարձեալ՝ նոյն կոնդակին վարդապետութեամբն և հոգւովը կը պարտաւենք և կը մերժենք այն երեսփոխանաց և իրենց համախոհներուն ըմբոստութիւնը, կանոնագիր-ծրագիր-շրջաբերականը և յամառ անհնազանդութիւնը և անոնց ամէն գործն և խօսք և ընթացք, որ հակառակ են ընդդէմ Կաթողիկէ Եկեղեցւոյ իշխանութեան, կանոնաց, իրաւանց, և վարդապետութեան։

Եւդոկիա 17 Յուլիս (ն. տ.) 1911

Հայ — Կաթողիկէ Ժողովրդ Եւդոկիոյ

Կը հետեւին վաթսուն Ստորագրութիւնք.

Սոյն այս թղթիս մէջ յայտնապէս յայտարարեալ ուղղափառամիտ զգացմանց եւ գովելի գաղափարաց եւ օրինակելի կրօնասէր հպատակութեան ձշմարիտ հայ Կաթողիկեայցն Եւդոկիոյ եւ անոնց յոժարակամ ձեռնագիր ստորագրութեանցն ի վաւերական հաստատութիւն:

Եւդոկիա 1 Օգոստոս 1911

Հայ կաթողիկէ Առաջնորդարան
(Կնիք)

Պօղոս Վ. Բօլաթեան
Արքեպիսկոպոսական Փոխանորդ

Փ. Պրանիֆ
Տնօրէն Դատաստանատան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսական Սիւնիոդոս ի Հռոմ — Առեն. Կաթողիկոս Պատրիարքին Կոնդակն . . . . . էջ 155
Պատասխան առ դիտող . . . . . » 158
Հին Կաթողիկէի մը Դարձը . . . . . » 162
Տեղեկագրական — Սրբազան Պիոս Ժ. Քահանայապետին Նամակն առ Լուիքրոյց Իշխան . . . . . » 164
Թեմերու Ձայնակցութիւն Կաթողիկոսական Տրամադրութեանց . . . » 165